

Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ



Աստուծմէ
ըրկուած
մարդ մը



Written by: Edward Hughes
Illustrated by: Alastair Paterson; Byron Unger; Lazarus
Adapted by: E. Frischbutter; Sarah S.
Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife
gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.
Produced by: Bible for Children
www.M1914.org

BFC
PO Box 3
Winnipeg, MB R3C 2G1
Canada

©2020 Bible for Children, Inc.
License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.

1

Օրին մէկը Աստուծոյ տաճարին
մէջ ծերուկ քահանայ մը կար, որուն
անունը Չաքարեա էր եւ խունկ
կը վառէր: Դուրսը ժողովուրդը
կ'աղօթէր: Յանկարծ
Չաքարիա թողաց:




2

Հրեշտակ մը եկաւ: Ան ըսաւ. "Մի՛ վախնար":
"Աստուած ինձի որկեց: Զու կինդ տղայ մը պիտի
ծնի, Յովաննու կոչէ գայն:



3

Ան Սուրբ Հոգիով պիտի լեցուի իր ծնունդէն: Ան
շատ մը մարդիկ Աստուծոյ պիտի դարձնէ":



4

"Մեր հետը խօսիր, Չաքարիա": Ժողովուրդը դուրսը
շուարած էր: Անոնք չէին գիտեր, որ հրեշտակը
ըսաւ, որ Չաքարիա պիտի չկարենայ
խօսիլ մինչեւ որ անոր գաւակը
ծնի, որովհետեւ ան Աստուծոյ
լուրին չհաւատաց: Ան կարծեց,
որ իր կինը արդէն ծեր է եւ
անկարելի է
գաւակ ծնի:



5

Տունը, Չաքարիա գրեց ան ինչ
որ հրեշտակը իրեն ըսաւ: Իր կինը
Էլիզապէթ շատ զարմացած էր: Անոնք
միշտ կ'աղօթէին գաւակ մը ունենալու:
Կրնա՞յ այդ փափաքը իրականանալ:



6

Շուտով Էլիզապէթ
գիտցաւ, որ գաւակ
մը պիտի ունենայ:
Ան փառք տուաւ
Աստուծոյ: Օրին
մէկը Էլիզապէթին
ազգականը Մարին
հիւրութեան կու
գայ: Մարին ալ իր
կարգին գաւակ կը
սպասէր:



7

Երբ Մարին հասաւ Էլիզապէթ
զգաց իր մանուկը փորին մէջ:
Էլիզապէթ լեցուած էր Սուրբ
Հոգիով: Ան լաւ գիտեր, որ
Մարիամին մանուկը,
որ պիտի ծնէր Տէր
Յիսուս Զրիստոսն
էր: Երկու կիները
միասին մեծ
ուրախութեամբ
փառք տուին
Աստուծոյ:




8




Աստուծոյ խոստումին համաձայն
Էլիզապեթին զաւակը ծնաւ. "Կոչէ
Չաքարիա, ինչպէս իր հայրը",
ըսին մնացեալ քահանաները:
Չաքարիա յիշեց Աստուծոյ
հրամանը. "Ոչ, պզտիկը
Յովաննու պիտի կոչուի":
Երբ Չաքարիա գրեց
այդ բառերը, ան
խօսելու սկսաւ:
Այդպէս ետք
Աստուծոյ
փառք
տուաւ:

9




Երբ Յովաննես
մեծցաւ, ան Եղիային
նման էր: Աստուծոյ
մեծ մարդը: Յովաննու
ըսաւ ժողովուրդին, որ
Փրկիչը Մեսիա կու
գայ, որպէսզի օրհնէ
իրենց:

10




Հրեայ առաջնորդները
կ'ատէին Յովաննու,
որովհետեւ ան ըսաւ
անոնց. "Չղջացէ՛ք,
դադրեցէք մեղք գործելէ":
Անոնք չէին ուզեր լսել
իրենց մեղքերուն մասին:

11




Շատեր զինք կոչեցին Յովաննու Մկրտիչը,
որովհետեւ ժողովուրդը ջուրին տակ իջեցուց
ցոյց տալու համար անոնց, որ անոնք
զղջացած են իրենց մեղքերուն համար:
Օրին մէկը Յիսուս եկաւ
Յովաննու, որպէսզի
մկրտուի: "Դուն
պետք է մկրտես ինձի":
Յովաննես մերժեց:
Սակայն
Յիսուս ըսաւ.
"Այդպէս թող
ըլլայ" եւ
Յովաննու
զինք մկրտեց:

12




Յիսուսի
մկրտութենէն
ետք, Յովաննու
տեսաւ Սուրբ Հոգին,
որ կու գայ Յիսուսին
վրայ աղանիկի նման:
Այս Աստուծոյ նշանն
էր: Յովաննու գիտեր,
որ Յիսուս Աստուծոյ
որդին է: Յովաննու
Յիսուսը կոչեց
Աստուծոյ գառնուկը,
որ իր վրայ կ'առնէ
աշխարհի բոլոր
մեղքերը:

13



Յովաննես շատեր
առաջնորդեց
Աստուծոյ, բայց
Հերովդէս, չար
կառավարիչը
Յովաննեսը
բանտարկեց: "Մեղք
ունի որ ամուսնանաւ
Հերովդիային հետ,
որ քու եղբորդ կինն
է", ըսաւ Յովաննես
Հերովդէսին:
Հերովդէս գիտեր,
որ ըսածը ճիշդ էր:

14




Ան գիտեր, որ Յովհաննես Աստուծոյ ծառան է, արդար եւ սուրբ մարդ մը: Բայց ան չէր ուզեր դադրիլ մեղք գործելէ եւ Յովհաննես չէր դադրեր քարոզել մեղքին դէմ, նոյնիսկ այդ արժեր բանտարկութիւն:

15




Իր տարեդարձին Յերովդես մեծ խրախճանք մը սարքեց. Յերովդիայի աղջիկը անոր համար պարեց: Ան շատ գոհացուց Յերովդեսը: "Ինչ որ փափաքիս կրնաս ուզել" խոստացաւ Յերովդես. "Նոյնիսկ իմ կէս թագաւորութիւնս":

16




"Ի՞նչ պիտի ուզեմ" մտածեց աղջիկը: Իր չարամիտ մայրը Յերովդիա, որ կ'ատեր Յովհաննեսը, ըսաւ ինչ որ պետք է պահանջէ սարսափելի բան էր:

17



"Ինծի Յովհաննու Մկրտիչի գլուխը ամանի մէջ տուր", ըսաւ աղջիկը Յերովդեսին: Ան շատ ցաւ զգաց իր խոստումին համար, բայց շատ հպարտ էր, որ իր խոստումը չի կտրուի: "Գլխատեցէք Յովհաննեսին եւ գլուխը հոս բերէք" հրամայեց Յերովդես: Անոր զինուորները հնազանդեցան իրեն:

18




Յովհաննեսին բարեկամները թաղեցին այս Աստուծոյ քաջարի եւ հաւատարիմ ծառային մարմինը: Յովհաննեսին գործը Աստուծոյ համար հոս վերջ գտաւ: Թերեւս գիտէին, թէ Յիսուս իրենց կը հանգստացնէ իրենց դժբախտութենէն:

19

Աստուծմէ դրկուած մարդ մը
 Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
 Սուրբ Գիրքը:
 Կը գտնուի հետեւեալին մէջ
 Ղուկաս 1, 3, Մարկոս 6
 "Զու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
 Սաղմոս 119:130

20



37

60

21

Այս Սուրբ Գիրքի պատմությունը մեզի կը պատմե մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գեշ բաներ ըրած ենք, որոնք հնք մեզ կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի ետէն վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր: Յովհաննու 3:16

22